



Աշխատանքային պարտականություններ և գործառույթներ

- Պատասխանատու է ծրագրի շինարարության նախագծանախահաշվային փաստաթղթերի ողջ ընթացքի համար,
- աջակցում է ճանապարհների, կամուրջների և ենթակառուցվածքների գլխավոր մասնագետին (ՃԿԵԳՄ)՝ վերահսկելու Խորհրդատուների և Կապալառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքին,
- պարբերաբար տրամադրում է տեղեկատվություն վերադասին,
- պատասխանատու է ծրագրերին առնչվող տեխնիկա-տնտեսական վերլուծությունների համար, հաջորդ տրանշերի նախապատրաստական աշխատանքների համար,
- վերահսկում է Խորհրդատուների և Կապալառուների կողմից պատրաստված փոփոխման պատվերները,
- ուսումնասիրում է Խորհրդատուների կողմից տրամադրված նախագծային փաթեթները՝ ներառյալ նախահաշիվները և զեկուցում ՃԿԵԳՄ-ին ներկայացված նյութերի վերաբերյալ,
- մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, Կառավարման Խորհրդի և դոնոր կազմակերպությունների համար տեղեկանքների պատրաստմանը,
- նախապես համաձայնեցնելով ՃԿԵԳՄ-ի հետ, առաջնորդում է և ուղղորդում Խորհրդատուներին և Կապալառու կազմակերպություններին տեխնիկատնտեսական հարցերում,
- վերանայում է, տրամադրում է դիտողություններ և պարզաբանումներ բոլոր նախագծերի, նախագծանախահաշվային և այլ ուսումնասիրությունների վերաբերյալ,
- վերանայում է Խորհրդատուների հաշվետվությունները՝ ՃԿԵԳՄ-ին ներկայացնելով առաջարկություններ և դիտողություններ,
- հետևում է շինարարական աշխատանքների կատարմանը, դիտարկում պայմանագրերի փոփոխումները, հայտերով և/կամ դիմումներով (ըստ անհրաժեշտության), ինչպես նաև աջակցում է ՃԿԵԳՄ-ին՝ տրամադրելով անհրաժեշտ տվյալները Մոնիթորինգի և գնահատման մասնագետին՝ ամսական և եռամսյակային կտրվածքով ծրագրի կատարողականի մոնիթորինգի համակարգը և ծրագրի վեբ կայքը մշակելու և արդիականացնելու նպատակով,
- կատարում է գործառույթից բխող վերադասի և/կամ վարկային և ծրագրի համաձայնագրերում և այլ ծրագրային փաստաթղթերում նախատեսված այլ հանձնարարություններ,
- կատարում է Գլխավոր գործադիր տնօրենի այլ առաջադրանքներ:

**Իմացություն և որակավորում՝**

- Բարձրագույն կրթություն քաղաքացիական շինարարության (ճանապարհաշինության) և/կամ դրան առնչվող ոլորտներում,
- առնվազն 5 տարվա փորձառություն հանրային և/կամ մասնավոր ոլորտների նմանատիպ զարգացման ծրագրերի ոլորտում,
- միջազգային և տեղական շինարարական նորմերի և ստանդարտների տիրապետում,
- միջազգային և տեղական մեթոդների կիրառմամբ շինարարական աշխատանքների միավոր գների և ծախսերի հաշվարկման և գնահատման իմացություն,
- **FIDIC** տեսակի պայմանագրերի իմացություն և փորձառություն (դիտարկվելու է որպես առավելություն),
- Գերազանց հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն (գրավոր և բանավոր),

- Ծանոթություն միջազգային կազմակերպությունների ընթացակարգերին (հատկապես՝ Ասիական Զարգացման Բանկ, Համաշխարհային Բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Եվրոպական ներդրումային բանկ, Եվրասիական զարգացման բանկ և այլ դոնոր կազմակերպություններ) ,
- Համակարգչային գիտելիքներ (առնվազն **Word, Excel, PowerPoint, AutoCAD, Microsoft project** կամ նմանատիպ այլ ծրագիր):

### Մասնագիտական հմտություններ՝

- գերազանց վերլուծական և ներկայացման հմտություններ,
- դիվանագիտական և բանակցային հմտություններ,
- ինդիքների լուծման և արագ որոշումներ կայացնելու հմտություններ,
- պլանավորման և կազմակերպչական հմտություններ,
- համագործակցող /թիմակից,
- արտագնա աշխատանքային այցեր կատարելու պատրաստականություն,
- արտաժամյա և լարված ռեժիմով աշխատելու ունակություն:

### Աշխատանքի պայմաններ և դրույթներ՝

- Աշխատանքի պայմաններն ու դրույթները կառավարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքականությամբ և ընթացակարգերով և աշխատանքային պայմանագրով: